

հեն, վասնզի անոնք կը վախնան որ եթէ բաց թողու- ուի, քրիստոնեաները կրնան քաղաքը գրաւել: Բայց դիտել կը տրուի թէ այս զրոյցը ժե. դարէն աւելի կանուխ չի կրնար ըլլալ: Դրան մէջ, հարաւային պա- տին վրայ, երկու սիւներուն միջև և հողէն գրեթէ ե- րեք ոտք բարձրութեամբ՝ նոր ժամանակներս գտնուած են երբայական գրերու հետքեր, որ մինչեւ այսօր ուշագրութենէ վրիպած էին (Han. W. 194-199):

11. Այն քաղաքը՝ որուն վրայ Յիսուս նստած կը քա- ռոզեր. — 1484ին Փէլիքս Ֆապրի ուղեգիրը կը գրէ. «Տաճարին մէջ տեղ մը կար ուր Դաւիթ աւետիս ըն- դունեց թէ իր սերունդէն պիտի ծնէր Տէրը. ուստի երբ Տաճարը շինուեցաւ՝ այս տեղն ալ պահուեցաւ և ժողովուրդէն ալ միշտ կը յարգուէր. և երբ Յիսուս Տաճար կուգար հոն նստած կը քարոզէր: Ուստի որ- պէս յիշատակ երկու քարեր դրուեցան հոն դէմ դի- մաց, որոնցմէ մին զետեղուած էր յատակին մէջ- տեղը՝ ուր Տէրը նստած կը քարոզէր, և միւսն ալ հոն՝ ուր ամէնօրհնեալ Ս. Կոյսը կ'երթար մտիկ ընել իր Որդւոյն քարոզութիւնը» (P. T. S. հատ. է. Ա. մաս, էջ 306):

12. Նորագիւտ քաղաքի մը Քրիստոսի քառասուն- եայ Տաճար գալուն դէպքը պատկերացնող. — Clermont- Ganneau Տաճարին հիւսիսային արեւմտեան անկիւնին մէջ մինարէին վրայ նշմարած է մարմարեայ խոյակ մը՝ կոտրուած պատկերներով: Պատկերամարտ իս- լամներու կողմէ թէպէտեւ կոտրուած են քանդակին գլուխները, բայց դժուար չէ եղած ամբողջացնել քանդակին տեսարանը: Չախ կողմը՝ Սիմէոն Ծերու-